



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Զերմուկ

24/մարտի/2020 թ.

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3 ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ...~~7~~... անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի տեղակալ Ս. Մարգարյանը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ա. Գառնիկյանը, ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյանը, աշխատակազմի առաջատար մասնագետ Մ. Առաքելյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանը

Նիստը արձանագրում էր Զերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը

Լսեցին

**ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. Վարդան Հովհաննիսյան/*

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան

1. Հաստատել Զերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 24-ի նիստի հետևյալ օրակարգը՝

1.1. Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով Զերմուկ համայնքի Հերիեր գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը հավանություն տալու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*



1.2. Նվիրատվության գործարքի կնքմամբ Ջերմուկ համայնքին օտարվող հողամասերը ժամանակավորապես գրավի առարկա մնալու վերաբերյալ համաձայնություն տալու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.3. «Ջերսան» ՍՊ ընկերության կարիքների համար հողամասի սերվիտուտ սահմանելու համաձայնություն տալու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.4. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.5. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի N 7-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.6. Դրամական հատկացումներ կատարելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջարար մասնագետ Մ. Առաքելյան*

1.7. Ջերմուկ համայնքի զարգացման ծրագրեր ներկայացնելու և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացում՝ սուբվենցիա ստանալու համաձայնություն տալու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ս. Վարդանյան*

1.8. «Ջերմուկի համայնքապետարանում խորհրդակցության դահլիճի կառուցում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում համայնքային ներդրում կատարելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ս. Վարդանյան*

1.9. «Քաղաքացու բյուջե» ենթադրամաշնորհի մրցույթի հայտադիմումների գնահատման արդյունքները հաստատելու և համայնքային ներդրման չափ սահմանելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ս. Վարդանյան*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-----7----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22-Ա/



Լսեցին

**ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՀԵՐ ԳՅՈՒՂԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. Գոհար Թադևոսյան/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով և համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշման՝

1. Հավանություն տալ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Հերիեր գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը. համայնքին սեփականության իրավունքով պատկանող Հերիեր գյուղի 2-րդ փողոցի N 33/1 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության հողամասը (գործառնական նշանակությունը՝ այլ հողեր, մակերեսը՝ 16 քմ, կադաստրային ծածկագիրը՝ 10-028-0050-0007) փոխադրել Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-----7----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 23-Ա/

Լսեցին

**ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔԻ ԿՆՔՄԱՄԲ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱԴՊԵՍ ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱ ՄՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. Գոհար Թադևոսյան/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

1. Համաձայնություն տալ «Ջերսան» ՍՊ ընկերության կողմից նվիրատվության գործարքի կնքմամբ Ջերմուկ համայնքին սեփականության իրավունքով օտարվող 0,06821 հա և 0,074 հա մակերեսներով հողամասերը ժամանակավորապես «Արդշինբանկ» ՓԲԸ-ում գրավի առարկա մնալուն՝ պայմանով, որ գրավի ազատման վճարները վճարելու է ՍՊ ընկերությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:



Կողմ 7 Դեմ 0 Ձեռնպահ 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24-Ա/

Լսեցին

**«ՋԵՐՍԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՐՎԻՏՈՒՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. Գոհար Թադևոսյան/**

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին, 5-րդ մասի 2-րդ պարբերությանը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 210-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան

1. Համաձայնվել «Ջերսան» ՍՊ ընկերության կարիքների համար (հողամասով անցնելու կամ երթևեկելու համար) 0,0,06821 հա հողամասի մշտական սերվիտուտ սահմանելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի օգտագործման համար սահմանել վճար. սերվիտուտի պետական գրանցման պահից յուրաքանչյուր ամսվա համար 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ 7 Դեմ 0 Ձեռնպահ 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25-Ա/

Լսեցին

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/**

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67 հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան՝

1. Համաձայնվել Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հետևյալ հողամասերը աճուրդով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով յուրաքանչյուր հողամասի օտարման նպատակը և մեկնարկային գինը համաձայն աղյուսակի՝



| հողամասի<br>օտարման<br>նպատակը       | հողամասի<br>գտնվելու<br>վայրը         | մակերե<br>սը,<br>հա | մեկնար<br>կային<br>գինը,<br>դրամ | հողամ<br>ասի<br>ծածկա<br>գիրը | Նպատակա<br>յին<br>նշանակու<br>թյունը | գործառնակ<br>ան<br>նշանակու<br>թյունը<br>կամ<br>հողա<br>տեսքը | իրավունքի<br>սուբյեկտը    |
|--------------------------------------|---------------------------------------|---------------------|----------------------------------|-------------------------------|--------------------------------------|---------------------------------------------------------------|---------------------------|
| Գյուղատնտեսական գործունեության համար | Գյուղ Հերիեր                          | 2,3876              | 161 500                          | 10-028-0148-0056              | գյուղատնտեսական                      | այլ հողատեսք                                                  | Ջերմուկ համայնք           |
| Գյուղատնտեսական գործունեության համար | գյուղ Գնդեվազ                         | 1                   | 10000                            | 10-016-0229-0051              | գյուղատնտեսական                      | այլ հողատեսք                                                  | Ջերմուկ համայնք           |
| Գյուղատնտեսական գործունեության համար | քաղաք Ջերմուկ                         | 7,00984             | 473500                           | 10-002-0405-                  | գյուղատնտեսական                      | այլ հողատեսք                                                  | Ջերմուկ համայնք           |
| Գյուղատնտեսական գործունեության համար | քաղաք Ջերմուկ                         | 10.15218            | 1783000                          | 10-002-0457-                  | գյուղատնտեսական                      | արոտ, վարելա – հող                                            | Ջերմուկ համայնք           |
| բնակելի կառուցապատման համար          | գյուղ Կեչուտ, 1-ին փողոց, N 1/1       | 0,0103              | 85 000                           | 10-002-0049-0003              | բնակավայրերի                         | բնակելի կառուցապատման                                         | Ջերմուկ համայնք           |
| բնակելի կառուցապատման համար          | Գյուղ Գնդեվազ, 16-րդ փողոց N12/2      | 0,3061              | 68 000                           | 10-016-0030-                  | բնակավայրերի                         | այլ հողեր                                                     | Ջերմուկ համայնք           |
| Հասարակական կառուցապատման համար      | քաղաք Ջերմուկ, Երևանյան խճուղի N 10/7 | 0,05616             | 500 000                          | 10-002-0024-0199              | բնակավայրերի                         | հասարակական կառուցապատման                                     | Հայաստանի Հանրապետություն |
| Հասարակական կառուցապատման համար      | քաղաք Ջերմուկ, Երևանյան խճուղի N 10/5 | 0,04421             | 400000                           | 10-002-0024-                  | բնակավայրերի                         | հասարակական կառուցապատման                                     | Ջերմուկ համայնք           |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----- 7 ----- Դեմ----- 0 ----- Ձեռնպահ----- 0 -----



Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26-Ա/

Լսեցին

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 7-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. Գոհար Թադևոսյան/**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերը՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի «2020 թվականի համար Ջերմուկ համայնքի և համայնքային ենթակայության կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին» N 7-Ն որոշման հավելված 4-ի «ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉ 2-Ի՝ « Ջերմուկ համայնքի ներհամայնքային ճանապարհների սպասարկում» շրջանակներում» բաժինը լրացնել նոր տողով՝ հետևյալ բովանդակությամբ՝

|                                     |      |     |   |
|-------------------------------------|------|-----|---|
| Ուղևորափոխադրում<br>միկրոավտոբուսով | 1 կմ | 200 | - |
|-------------------------------------|------|-----|---|

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-----7----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 27-Ա/

Լսեցին

**ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. Մարիամ Առաքելյան/**

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշմամբ հաստատված կարգը և հաշվի առնելով Ջերմուկ համայնքի բնակիչների դիմումները և դրանց հիման վրա համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (սոցիալական աշխատող) կողմից կազմված սոցիալական դեպքի վարման գործերը՝

1. Ջերմուկի համայնքի 2020 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից դրամական օգնություններ տրամադրել համայնքի հետևյալ բնակիչներին՝

Մելիքյան Թամարա՝ 200 000 (երկու հարյուր հազար)

Ավագյան Նարինե՝ 200 000 (երկու հարյուր հազար)



Գրիգորյան Գայանե՝ 200 000 (երկու հարյուր հազար)

Հունանյան Սամվել՝ 100 000 (հարյուր հազար)

Եղիազարյան Արտեմ՝ 100 000 (հարյուր հազար)

Հակոբյան Սահակ՝ 100 000 (հարյուր հազար)

Բազրադյան Խաչիկ՝ 100 000 (հարյուր հազար)

Ավետյան Անի՝ 75 (յոթանասունհինգ հազար)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-----7----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28-Ա/

Լսեցին

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ՝  
ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. Սյրեփանոս Վարդանյան/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի պահանջներով և նկատի ունենալով, որ համայնքի կողմից ֆինանսական ներդրումներ կատարելու պայմանով 2020 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին տրամադրվելու են նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ՝

1. Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ներկայացնելու Ջերմուկ համայնքի՝ ստորև ներկայացվող տնտեսական զարգացման ծրագրերը՝

ա) «Ջերմուկ քաղաքում ճեմուղու և ավտոկայանատեղիների կառուցում, մայթերի սալիկապատում և ասֆալտապատում, Հերիեր գյուղի 1-ին փողոցի ասֆալտապատում, Ջերմուկ քաղաքի Մաշտոցի փողոցի բաժանարար գոտու բարեկարգում և կանաչապատում»,

բ) «Մինչև 300 կվտ/ժ արևային ֆոտովոլտային կայանի կառուցում»,

գ) «Ջերմուկ քաղաքի ճոպանուղու շինությունների հիմնանորոգում, նորերի կառուցում»,

դ) «Մանկական զարգացման կենտրոնի և դրան կից խաղահրապարակի կառուցում, «Գնդեվազ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մասնաշենքի մասնակի վերանորոգում, մանկապարտեզների բակերի բարեկարգում»,



ե) «Կեչուտ, Գնդեվազ, Հերիեր և Կարմրաշեն գյուղական բնակավայրերում արտաքին լուսավորության ցանցի կառուցում, գործող լուսավորության ցանցում էներգախնայող լուսատուների տեղադրում»,

զ) «Զերմուկ քաղաքում բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետ արդիականացում»,

2. ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման» կարգին համապատասխան կազմել և ՀՀ Վայոց ձորի մարզպետարան ներկայացնել սույն որոշման 1-ին կետի «ա»-ից «զ» ենթակետերում նշված ծրագրերի ֆինանսավորման հայտերի ամբողջական փաթեթները:

3. Սահմանել, որ ծրագրերի ներկայացման համար համայնքի 2020 թվականի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված դրանք իրականացնելու և համայնքի կողմից ներդրում կատարելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-----7----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29-Ա/

Լսեցին

**«ԶԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԱՀԼԻԾԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. Սրեփանոս Վարդանյան/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42-րդ կետերի պահանջներով՝

1. Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և Ավստրիական զարգացման համագործակցության ֆինանսավորմամբ ու Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Ժողովրդական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում» ծրագրով «Զերմուկի համայնքապետարանում խորհրդակցության դահլիճի կառուցում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարել համայնքային ներդրում՝ դրամաշնորհի առնվազն 10 տոկոսի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-----7----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30-Ա/



Լսեցին

«ՔԱՂԱՔԱՅՈՒ ԲՅՈՒՋԵ» ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Սյրեփանոս Վարդանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 6-րդ և 42-րդ կետերի պահանջներով՝

1. Հաստատել «Քաղաքացիների ձայնն ու գործունեությունը Հայաստանի խոշորացված համայնքներում» ծրագրի «Քաղաքացու բյուջե» ենթադրամաշնորհի մրցույթի հայտադիմումների գնահատման արդյունքները և հաղթող նախագիծ հայտարարել -----

Ջերմուկ համայնքի նախագիծը աշխատանքային խմբի կողմից ներկայացրածը:

2. Սույն որոշման առաջին կետում նշված ենթադրամաշնորհի համար սահմանել համայնքային ներդրում՝ 500 /հինգ հարյուր/ եվրոյին համարժեք ՀՀ դրամի չափով՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ տվյալ օրվա սահմանած փոխարժեքով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-----7----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 31-Ա/

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն                | ստորագրություն     |
|--------------------------------|--------------------|
| Բաբայան Կավկազ Զավենի          | <i>բաբայան</i>     |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի   | <i>[Signature]</i> |
| Բագրատյան Արտակ Կառլենի        | <i>[Signature]</i> |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի    | <i>[Signature]</i> |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի    | <i>բաբայան</i>     |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի        | <i>[Signature]</i> |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի   | <i>[Signature]</i> |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | <i>[Signature]</i> |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի         | <i>[Signature]</i> |



